

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբարացիք դիմում են ուղղակի
Тифлису. Редакция „Мусава“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և սուրբ օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեղուղով:

Հայտարարութիւններ համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Տառն և ինքն փետրվարի յիշատակին:—Ներքին տեսչութիւնը: Հայկ. ներկայ վիճակը: Նախապէս շուշուկ: Նախապէս խմբագրին: Ներքին լուրեր:—Սրտ աքիս անուշ լինի: «Темп» լրագրի թղթակցութիւնը հայերի մասին: «Մշակ» հեռագիրներ:—Հայտարարութիւններ:—Բանասիրական: Հայ կաթողիկոսներ:

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆ ՓԵՏՐՎԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ընթող ռուսաց մամուլը, ամբողջ ռուսաց հասարակական կարծիքը տոնում են այսօրվայ օրը, 19 փետրվարի, մեր թագաւոր Կայսրի թագաւորութեան 25 ամեայ տարեդարձի օրը:

«Русская Старина» ամսագրի փետրվարի տետրակը ամբողջութեամբ նուիրված է այդ նշանաւոր օրվայ յիշատակին: Գրքոյկի ընթերցողը ներթերը վերաբերվում են

ներկայ թագաւորութեան նշանաւոր գործերին և արած վերանորոգութիւններին:

Ներկայի է մոռանալ թագաւորի խօսքերը, որոնք ասվեցան 1861 թւի յունվարի 28-ին պետական խորհրդի ընդհանուր նիստը բացվելու ժամանակ:

«Ճորտերի ազատութեան գործը, որ ներկայանում է պետական խորհրդի քննութեամբ, ասում էր Կայսրը, իր նշանաւորութեան կողմից Նա համարում եմ Ռուսաստանի համար կենսական խնդիր, որից կախված է նրա ոյժերի և հզօրութեան զարգացումը»:

Մեծ խօսքերը իրագործվեցան մեծ գործերի միջոցով: Այն խնդիրը, որ Կայսրը իրաւամբ համարում էր հիմնական խնդիր Ռուսաստանի համար, լուծվեցաւ և նրա ետեւից իրագործվեցան շատ ուրիշ խնդիրներ, կատարվեցան

շատ ուրիշ վերանորոգութիւններ, որոնք կապ ունէին առաջինի հետ, և որոնց մի առ մի հարեանցութեան յիշին անգամ ներկայացնում է մի փայլուն էջ քաղաքակրթական պատմութեան մէջ: Բոլոր հինը և ազատ զարգացման արգելք դնողը հետզհետէ վերցվում էր և նրա տեղը զբաղում է նորը և ժամանակակիցը:

Խմբագրի կապալը, մարմնի պատիժը, տպագրական խօսքի ճշնամբ, փակված դատարանները, —այդ բոլորը վերցվեցաւ և սերմանվում են նոր և առողջ սերմերը քաղաքային և նահանգական ինքնավարութիւն (գէմնտի), հրապարակական դատարան, բիւզժէտի հրատարակելը, ընդհանուր զինուորագրութիւն և այլն:

Նա այդ վերանորոգութիւններին համեմատ յայտնվում են մարդիկ, որոնք ընդունակ են լի-

նում իրագործել թագաւորի ձեռքով շնորհված բեֆօրմներ:

Նա այդ բոլոր վերանորոգութիւնների խորհուրդը, կարելի է ասել, ամփոփվում է մի խօսքի, մի գաղափարի մէջ խաւարի տեղ լոյս:

Այդ պատճառով ամեն մի քայլ դէպի առաջ, ամեն մի ջանք աւելացնել լոյսը և յետ մղել խաւարը, մեր կարծիքով ամենալաւ միջոց է տոնել փետրվարի 19-ի յիշատակը: Այդ պատճառով մենք չենք կարող առանձին ուրախութեամբ չողջունել մեր թիֆլիսի Գումայի շաքար թրվայ վճիռը, որով նա կամենում է տոնել այդ նշանաւոր և անմոռանալի օրը, առաջարկելով տէրութեանը, եթէ հիմնիկ Կովկասեան համալսարան, նշանակել քաղաքի գումարներից 100,000 ռուբլ և տալով մի գետին քաղաքի մէջ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐ

Բաւական է որ մի անհաղթ ձգնէ մեր ազգի անհաղ ապստոլութեանը՝ և պատկերացնէ մեր երկակայութեան առաջ նրա անցեալը, անպատճառ պէտք է համոզվենք, որ հայը իր դարերը ստրկութեան մէջ քաշած դառն և ցաւալի աղէտներից յետոյ, կրկին չը կարողացաւ ձանաչել իր մեծակ թշնամուն, որն իր ծոցի մէջ անբաժան հանգչում է և գուցէ բաւական ժամանակ արանից յետոյ բաժանվելու չէ: Հայի անգուժ և անտանկի թշնամին, նրա տոբուլթենից յառաջացած կրօնական վէճերն և երբայրապետութիւնն է:

Եթէ ներկայացնենք մեր երկակայութեանը այն տխուր պատկերները, և այն ցաւալի իրողութիւնները, որոնք կատարվել են մեր ազգի երկու մարմինների հայրուստաւորականների և հայ-կաթոլիկների մէջ, անպատճառ պէտք է ցաւենք (եթէ զգալի սիրտ ունենանք) անցեալի վրա և որի տխուր իշխանութիւնը մենք տեսնում ենք այժմ էլ հայի լայն ձախտի վրա: Ստրկութիւնը յառաջացած և շարունակ քաղաքական հոսանքներին ենթակայ լինելով, բնականաբար հայը դիմում էր նրա պաշտպանութեանը, որի հզօր բաղադրը կարող էր պաշտպանել նրան հայաժող ձեռքից, Տաճկաստանի թղթական մոլեռանդ տիրապետութեան մէջ, որ ժողովրդի պատիւը, սեպականութիւնը, և անձը բռնաբարվում էր ամենաբարձր ձեռքից, և ուր կրօնական ազատութիւնը ստանալովում էր այլապիսիներից, բաւական էր որ նպատակը կրօնափոխութեանը. և Հաւան և Գաղղոյի ազդեցութիւնը Տաճկաստանի վրա, այդ գործի վերաբերութեամբ, բաւական չէր բարացել կարող էին լինելու:

Իսկ մի քանի բարձր եկեղեցականների չափազանց ետական բնաստութիւնը, որը այդ գործին բաւական ազդեց և բաժանման պատճառ եղաւ, ժողովրդի տեղա դասից բաւական համակրվեցաւ և փառաբանութիւնների արժանացաւ: Որքան ցա-

ւալի է ասել, որ հայ ազգի մեծամասնութիւնը, հայրուստաւորական մասը, փոխանակ հեռաւոր աշօք նայելու գործի և բաժանման վրա, տգիտաբար համակրեցին կրօնական բաժանմունքներ, և յառաջութեամբ սկսեցին իրանց և չը հասկանալի մտքին: Կրօնական բաժանմունքից առաջացած անգիտալի իրողութիւնները չենք կամենում յիշել, այլ որքան որ մեր միտքը կը ներէ մեզ, կամենում ենք ասել հետեւեալ իրողութիւնները: Վերաւանդը անցեալ 1877—78—79 թականները, և տեսնենք հայի պատրաստակամութիւններն որքան համապատասխան էին յիշալ թականներին յիշաւորելու: Յիշեալ թականները, ինչպէս ընդհանուր մարդկութեան, նոյնպէս և հայի կենսայ համար, նշանաւոր և անմոռաց թականներ են, որոնց մէջ բաւական նշանաւոր փոփոխութիւններ կրեց հայի վիճակը և ճակատագիրը: Այդ թականների մէջ հնչեց արեւելեան ծանր հարցը, և Տաճկաստանի լծի տակ հնծող քրիստոնեայ ազգերի դառն վիճակը մարդասէր Եւրոպայի համակրութիւնը չարժեց և մարդասիրական ոգին փայլեց նեղեալ ազգերի հօրիքների վրա:

Մինչ քրիստոնէից պաշտպան կայսեր զօրքերը յաջողութեամբ արշաւում էին Բալկանեան շրջանների վրա, և նրանց մի մասը կանգնած էին Հայաստանի մէջ, թշնամու դէմ, հայի արկները դեմաւորները պէս հովում էր վայրենի քրդերի և գաղանաբարոյ չէրքէքները սրի տակ: Ծանալացաւ հայի վիճակը իր անպաշտպան լինելուց և քանի որ ցաւը չէր ազդած նրա ուկրի վրա, նա անշարժ էր, և ուրեմն պէտք էր որ նոյն սթափվէր իր դարեր քնից և ճանաչէր ժամանակի պահանջը: Այդ թականներում նա ցրցր տուեց Եւրոպային իր ծանր և խոր վէճերը և խնդրեց յանուն մարդասիրութեան դարման թշնամութեան, Նա ցրցր տուեց Եւրոպային իր ջնաշխարհիկ անցեալը և ասեց իր անհաղ լուրերը իր խնամակալութեան և համակրութեան և վերածննդութեան: Եւրոպան չնորոնց հային մարդկային իրաւունքը, որպէս քաղաքակրթ և գոյութեան արժանի մի ազգի և զբնտրում նա ճանաչեց նրա ապագան և իրական գոյութիւնը: Ընդունելով իր խնամակալութեան և հովանաւորութեան տակ, արժանի համարեց նրա անունը արձանագրել քաղաքական մեծ դաժնագրութեան մէջ:

Այժմ տեսնենք թէ հայը որքան պատրաստ էր

դիմաւորելու քաղաքական հոսանքին, և որպէս առողջ մարմին, ներկայանալ ապագեղի մէջ: Երբ յարուցվեցաւ արեւելեան հարցը, յարուցվեցաւ և հայկական հարցը, որը Եւրոպայի ուշադրութիւնը գրաւեց: Մինչ հայկական խնդրը Եւրոպայի դիմանալու փայլում էր իր փափուկ աստիճանում, նոյն ժամանակ և ծագեցաւ հայ-գերդաւորների մէջ ներքին կրօնական հարց, հատուկեան և հակահատուկեան կաթոլիկական հարցը, և մի մեծ հարուած տուեց ազգութեան գործին: Կաթոլիկական հարցը մի և նոյն ժամանակ, տաճկաց կաթոլիկութեան ներքին զրդմամբ, երեւցաւ, և Տաճկահայաստանի դաժնալի կողմերում և դուցէ այդ էր, որ հայկական դատը ցանկացած լուծումը չը ստացաւ: Մենք բարդ չունենանք լսելու, թէ հայ-կաթոլիկներն որքան օգնեցին, երբ հայրուստաւորականների ներկայացուցիչները դառն աշխատանքով և անձնաւորութեամբ պաշտպանում էին հայկական դատը:

Հայ-ազգի պատուիրակները երբ Եւրոպային ներկայանալով պաղատում էին զթուլթիւն, մարդասէր ողորմութիւն, հայը զբաղված էր կրօնական խնդրով, որով Եւրոպայի կարծեց հայ ազգը որպէս մի կրօնական կուսակցութիւն, և ոչ որպէս ազգութեան տիրողութիւն: Մինչ Տաւրոսի գոտիների մէջ նշմարվում էր կենաց նշոյլ, և լեռնական հայը պատրաստ էր պաշտպանել ազգութեան պատիւը, ոչ ցաւում եմ ասել, յանկարծ լավեցաւ դաւաճանութեան թոյնը եղբոր ձեռքով, հայ կաթոլիկաց ձեռքով: Ձեռքով թալ լեռնականները բաւական ժամանակ յանկարծ տապալեցան բանտերի մեթութեան մէջ և ապալսարանցին այն գործի համար, որի ճանաչութեան վսեմ պարտականութիւնը հարկաւոր է ամեն աղին սրտերին:

Վերջապէս կազմվեցաւ Տաճկաստանում երեք մեծ հայկական ընկերութիւններ, որոնց նպատակն էր լոյս ծաւալել նորարոյս սերունդի մէջ և պատրաստել ապագայում լաւ հայեր հայրերի համար: Տաճկաստանի հայ-կաթոլիկները որքան օգնեցին այդ ընկերութիւններին, մենք չենք կարող ասել, որովհետեւ Տաճկաստանի հայ-կաթոլիկաց կենսաբան մեզ բաւական միջին և կատարեալ անձնաթէ է: Հայկական ընկերութեանց նպատակը լինելով ազգային ընդհանուր կրթութեան գործը, արդեօք պիտի և համակրէ խոտորչութիւն մէջ բնակվող քաջ լեռնական հայ-կաթոլիկաց բարոյական պահանջին: Մենք մեծ յոյս ունենք յիշեալ ընկերութեանց գոր-

ծողութեանը և համոզված ենք, որ առանց ուշադրութեան չի թողնի այդ լաւ և անփայտած հայ-կաթոլիկներին: Գաղով կաթոլիկական հայ-կաթոլիկներին, չենք կարող ասել, որ նոյնա կա լատինական պարտականութիւնները: Չը կարողանանք մեր ազգային թերթերում որ մի խումբ հայ-կաթոլիկներ ազգասիրաբար նուիրած լինէին իրանց լուսմանն ազգային կրթութեան գործին: Անդրկովկասում կան շատ ու շատ հարուստ հայ-կաթոլիկներ, որոնք կատարելապէս ապահոված են նիւթական զրուլթեամբ: Առանցից արդեօք օգնութեան ձեռք կարկառել Տաճկաստանի իրանց համարին եղբարց բարեւուլթեան և յառաջակցութեանը: Արդեօք ինչ էր պատճառը, որ նոյնա այսպէս սառն կերպով վերաբերվեցին մի վսեմ գործին: Մենք գրեւոր պատճառ չենք կարող որոնել, բայց միայն կրօնական բաժանման սառնասրտութիւնը: Իսկ մէջ արդեօք, որ Անդրկովկասի հայ-կաթոլիկաց մէկ եկեղեցու մէջ հնչեցուցած լինէր ազգութեան և կրօնի տարբերութիւնը: Իսկ մէջ որ հայ-կաթոլիկ կղերը քարոզէր ժողովրդին եղբայրութեան, հայրենասիրութեան և ինքնաճանաչութեան գաղափարները: Երանի թէ այսուհետ փոփոխվէր հայ-կաթոլիկ եկեղեցական առաջվայ նախապաշարմունքը, և պարտաճանաչութիւնը դրաւէր նոյնա միտքը:

Ահա այսպիսի դառն խորհրդածութիւններ են, որ վրդովում են մարդուս հոգեկան խաղաղութիւնը և ակամայից կարծում են, որ հայ ազգը քանի որ ինքնաճանաչութեան գաղափարը չէ բռնունել, չէ ձանձրացել իր սիրելի կրօնական անհականային վէճերից, քանի որ չէ ճանաչել իր կաթոլիկ—բողոքական և մահաճանաչական եղբայրներին, նա երբէք չէ կարող, որպէս առողջ, գոյութեան և յառաջակցութեան արժանի ազգ, կանգնել մարդկային շրջանի մէջ: Երանի թէ այս նոր տարուս փոփոխվէր Տաճկահայաստանի բնակիչ հայ-կաթոլիկների նախկին բնաստութիւնը և չը չփոխվելով ազգութեան գաղափարը կրօնական գաղափարին, հատկութեամբ օգնէին իրանց հայրուստաւորական, լողորդական եղբարց բարոյական զարգացման և բարեկաւութեանը: Նոյնը և ցանկանում ենք կովկասի և Անդրկովկասի հայ-կաթոլիկներին:

Հայ-կաթոլիկ

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Գրականատանցում հետևեալ գրքերը:

Մանկական երգեր Գամառ-Բաթիկայի, կազմած	—	ր.	25	կ.
— նոյնը անկազմ	—	»	15	կ.
Թաւանալ մեղու պատկերազարդ, կազմած թարգ. օր Ն. Տէր-	—	»	40	կ.
Մարկոսեանի	—	»	50	կ.
Կարմիր լապտեր պատկերազարդ և կազմած, թարգ. օր Ն. Տէր-	—	»	30	կ.
Մարկոսեանի	—	»	60	կ.
— նոյնը առանց կազմի	—	»	30	կ.
Վէպեր. Յ. Գրիգորեանցի	—	»	30	կ.
Պէպո. կոմեդիա երեք արարվածով, հեղ. Գ. Սունդուկեանի	—	»	1	—
Մօրեա կամ աշխատութիւն, հեղ. Տ. Գառնո-Թարգմ. Գաղիերէնից.	1	»	—	կ.
Բորհրդաւոր կղզի, հեղ. Ժ. Վերն 3 հ. թարգ. Գաղիերէնից	4	»	—	կ.
Դիւանակ բլուր. հեղ. Էսթէն Սիւ 2 հ. թարգ. Գաղիերէնից	2	»	75	կ.
Պատանեկան ներշնչումներ, հեղ. Հրանտ Սաստուրի	—	»	60	կ.
Սահմանադրութիւն և հայ ժողովուրդի չ. Սաստուրի	—	»	35	կ.
Մի կաթիլ արտոյր, գոր կը հեղու. Սիւակ հայ մեխիքի վրայ	—	»	35	կ.
Խօսք զհայրենեաց հեղ. Վ. Վ. Պարտիզանցի	—	»	70	կ.
Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ հեղ. Սրուանձաեանց	1	»	25	կ.
Մանասայ նոր հեղինակի	1	»	75	կ.
Սիրաք և Սամուէլ բարի հօր կրթական դասեր, հեղ. Խրիմիան Հայրիկ	1	»	45	կ.
Մարգարիտ արքայութեան երկերից, նոյն հեղ.	—	»	75	կ.
Վանդոյժ. կուժ մի ջուր իւր այրած հայրենեաց վերայ կ'արեկ Խրի-	—	»	20	կ.
մեան հայրիկ	—	»	40	կ.
Թէ ինչ շահեցանք Բերլինի վեհաժողովէն, հեղ. Մ. Չերազի	—	»	60	կ.
Հայաստան և Իտալիայ նոյն հեղ.	—	»	50	կ.
Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ս. Ար-	—	»	50	կ.
ժրուռու.	—	»	50	կ.

Հրատարակութիւն Զարմայր Մանեանի

Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս.	1	»	—	կ.
Ներայր և քոյր Գերմանական վէպ. պատկերազարդ	—	»	30	կ.
Արքայադուստր Գերմանական վէպ. պատկերազարդ	—	»	35	կ.
Հակայական ձեռքեր Անդրկական վէպ. պատկերազարդ	—	»	10	կ.

Իշխան Բէհրուլեանի հրատարակութիւններ

Վոյքի իմ վէպեր, Փարս երեք պատկերով Մ. Տ. Գ.	—	»	40	կ.
Բերքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ	—	»	25	կ.
Աշնանային երեկոյ գիւղում, վոյքով մէկ արարուածով	—	»	25	կ.
Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով	—	»	40	կ.
Ժանս և Ժանէտ, օպերա-վոյքով, մէկ գործողութեամբ	—	»	40	կ.
Պառաւնեքին խրատ. վոյքով մէկ արարուածով Մ. Տ. Գ.	—	»	50	կ.

Տիկինը նրան ապառու է, կա տ ա կ եր գ ու թ ի լ ը մ է կ ար ա	—	»	30	կ.
Ռ ու ա ծ ո վ .	—	»	40	կ.
Անանուն կատակ. կատակերգութիւն մէկ արարուածով	—	»	30	կ.
Փակուած դրան մօտ. պատկերամենախօսութիւն	—	»	30	կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակի դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուներէ, դասական պիտոյքներ ուսումնարաններէ և աշակերտների համար. Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և դիտու-թեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արա-դութեամբ: Օտարալեզուները իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցեով ВЪ Тифлисѣ. Въ Центральную книжную торговлю

8—10



Կիրակի, յունվարի 27-ից սկսած, Գ ու լ ը ի բ ե ա ն փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բաղանի մէջ կը ներկայացնուի հասարակութեանը երեք այստեղ չը տեսնված երեւոյթ, այն է ԵՌՕՊԵՅԻ ԸՈՒԼ-ՋԱԻՆ ՀՍԿԱՅ ՕՐԻՈՐԻ ԱՄԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր ԿԱՐԼԻՆՍԿԻ ՄԱՐԿԻՆԻ ՀԵՆՐԻԽ ՎՕԼԳԻ և ՄԱՐԿԻՆԻՆԻ ԼՈՒԻՅԷ ՏԵ-ղերի գները՝ առաջին տեղեր 50 կոպէկ, երկրորդ 30 կոպէկ: Լըրեխաները կէսն են վաճառում:

6—12

ՍԻՆՕԿԻ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱՇՆԻ ուղարկած լի-նելով Գերապատիւ առաջնորդին Տիֆլիսու հրամանաւ ՆՈՐԻՆ ՕԹՈՒԹԵԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱՌՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ օրհ-նութեան և գոհութեան վանն առաւ ՆԸ-ԻՆԻՍՏԻՏՈՒԹԵԱՆ ժողովրդոց բաղաբիւ ի նը-պատ շնորհեան ՆՆՋԱՐԱՆԻ ձԵՄԱՐԱՆԻ սրբոյ ԷՋՄԻԱՇՆԻ. Այս կոնդակը պիտի ԿԱՐ-ԴԱՑՈՒԻ առաջիկայ ԿԻՐԱԿԻՍ օր է 17 փե-տովարի ՎԱՆՍՑ մայր եկեղեցւոյ մէջ և յետոյ կարգով ՄԻԻՍ եկեղեցիներում ի լուր բարե-պաշտ ժողովրդոց, որ մասնակից եղան այն նուիրատուութեան:

Անդամ կոնսիստորիայի Գէորգ աւագ քա-հանայ Թէմուրազեանց

ԲԵՐԼԻՆԻ աղաքեմիաի Ինժեներ Կ. Կ. Կեյ-լինգ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է ամեն տեսակ ՊԼԱՆՆԵՐ և զանազան ԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ և անձն առնում: Հասցեն Վարանցովսկայա Նաբեբեժնայա, № 4, ՎԵՐԻՆ ԹԱՐԿՈՒՄ:

ՄԻ ՕՐԻՈՐԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ ուսուցչուհու ՎԱՅՄԱԿԱՆ ունի, ՆՈՐ է եկել ՓԱՐԻՋԻՑ և հիմնաւորապէս իմանում է ՌՈՒՍԵՐԵՆ, ՅԸ-ԲԱՆՍԻԵՐԵՆ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆ, ԱՆԳԼԻԵՐԵՆ և ԻՏԱԼԻԵՆ լեզուները, նոյնպէս ՆԵՄԻՇԿՈՒԹԻՆ և ՆԵՐԵՅՈՒԹԻՒՆ. փնտաւած է ԳԱՍԵՐ կամ վարժուհու ՊԱՇՏՈՆ: Հասցեն. Ատամանսկայա փողոց, ՋՈՒՐԱԼՈՎԻ ՏՈՒՆ, առաջին յարկում Սեմիարիայի հանդէպ, Բրոքսկու բնակարա-նում:

5—6

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

“ԿԱՅԾԵՐ”

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակու թիւն ԲԱՅՅԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներէ իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երես-ներ: Եւմեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրել կարելի է ԳԵՄԵՆՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բաղնաձեղ են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐ» տպագրութեան համար, իսկ թիֆլիսոյ պէտք է դիմել «ՄԵ-շակի» խմբագրատանը Յ. ՄԷԼԻԿ-ՅԱՆՈՒՆԵՆԻՆ:

ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Երգի կէտն ց քահանայ—Մանկա-կան երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է ներխան և Գայանեան դպրոցներում: գինն է . . . — ր. 20 կ.
2. Մեծ տոսն և անց—Երգարան աղջ-կանց և աշակերտուհեաց Հայկական ու-սումնարանաց . . . 1 ր. — կ.
3. Բ ժ ի շ կ . Բ . Ն ա ա ս ա ր դ ե ա ն ց—Դիֆտերիա բողազացաւ . . . — ր. 25 կ.
4. Բ ժ ի շ կ . Գ . Տ է ք - Գ ի դ օ ր ե ա ն ց—Վա-րակիչ հիւանդութիւններ:

(Ծաղիկ, կարմուռ, սկաւորտին, բժաւոր տիֆ, անդրադարձ տեղ, դիֆտերիա, ընդ-հատ տեղ, խօլերայ, դեղին տեղ, որովայ-նատիֆ և ժանտախտ): Սոցա յատկութիւններն, ծաղման և տա-րածման եղանակներն և նախապաշտպան-դական միջոցներ:

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկա-սեան գրականատանցում:

5—8

Մանուկ բարկանսարան այր-վելուց յետ, նորից բացված է իս-տակ մօմի առևտուր Սիօնեան փո-ղոցում Երծրունու բարկանսարա-յում № 14. իւրաքանչիւր շաբաթ մօտացվում է նոր շնուած իստակ մօմեր իմ սեփական զաւթից և որոնք վաճառվում են էժան գնե-րով. խնդրեմ գնողներին չը թող-նել իրենց այցելութիւնները:

Յովաննէս Կուրծեան

4—4

Փետրվարի 12-ից ԿԸ ԲԱՅՅԻ ԻՆՏԵՆՍ ՍՈՒՄ ԲԱՅՅՈՎԻ տանը ԿՈՆԴԻՏԵՐԻ և ՀԱՅՍԱՐԱՐԻ (пе-карня) մտացին «ВАРШАВСКАЯ ПЕКАР-НЯ» վերնագրով, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմոր և դէնն և ր, նոյնպէս կը վա-ճառվին զանազան տեսակ կօնֆէտն և ար-ժան գնով թէ փքը և թէ մեծ քանակութեան ցանկացողները կարող են ստանալ իմ ԳՈՐԾԻ ԲԱՆԻՑ: Օտար քաղաքացի կարող են դիմել հե-տևեալ հասցեով. СОЛОЖКИ, ВЪ ВАРШАВ-СКОЙ ПЕКАРНИ Мартыроу Ахназарову. Պա-տուէրները կը կատարվին ամենայն ճշգրտութեամբ գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով: Կոնֆէկտների գինը ֆառնայ 40 կոպէկից մինչև 1 ր.:

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԻ, որ աւարտել է իւր ու-սումն Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱ-ՋԻԱՆՍԿԻՑ միջի մէջ, ցանկանում է վարժու-հու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՈՒ-ՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրում ուղարկել հետևեալ հասցեի. С. Петер-бургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив. Иоану.

4—5